

**No. 55843\***

---

**Cyprus  
and  
Armenia**

**Agreement between the Government of the Republic of Cyprus and the Government of the Republic of Armenia on mutual protection of classified information. Nicosia, 29 May 2017**

**Entry into force:** *23 April 2019 by notification, in accordance with article 14(1)*

**Authentic texts:** *Armenian, English and Greek*

**Registration with the Secretariat of the United Nations:** *Cyprus, 25 July 2019*

*\*No UNTS volume number has yet been determined for this record. The Text(s) reproduced below, if attached, are the authentic texts of the agreement /action attachment as submitted for registration and publication to the Secretariat. For ease of reference they were sequentially paginated. Translations, if attached, are not final and are provided for information only.*

---

**Chypre  
et  
Arménie**

**Accord entre le Gouvernement de la République de Chypre et le Gouvernement de la République d'Arménie relatif à la protection mutuelle des informations classifiées. Nicosie, 29 mai 2017**

**Entrée en vigueur :** *23 avril 2019 par notification, conformément au paragraphe 1 de l'article 14*

**Textes authentiques :** *arménien, anglais et grec*

**Enregistrement auprès du Secrétariat de l'Organisation des Nations Unies :** *Chypre, 25 juillet 2019*

*\*Aucun numéro de volume n'a encore été attribué à ce dossier. Les textes disponibles qui sont reproduits ci-dessous sont les textes originaux de l'accord ou de l'action tels que soumis pour enregistrement. Par souci de clarté, leurs pages ont été numérotées. Les traductions qui accompagnent ces textes ne sont pas définitives et sont fournies uniquement à titre d'information.*

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**  
**Գիպրոսի Հանրապետության Կառավարության**  
**և**  
**Հայաստանի Հանրապետության Կառավարության**  
**միջև՝**  
**գաղտնի տեղեկատվության փոխադարձաբար պաշտպանության մասին**

Գիպրոսի Հանրապետության Կառավարությունը և Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, (այսուհետև՝ Կողմեր),

գիտակցելով քաղաքական, ռազմական, տնտեսական, իրավական, գիտական, տեխնոլոգիական կամ ցանկացած այլ տեսակի համագործակցության շրջանակում փոխադարձաբար փոխանակվող գաղտնի տեղեկությունների, ինչպես նաև նման համագործակցության ընթացքում ձևավորված գաղտնի տեղեկությունների պաշտպանության կանոնների սահմանման անհրաժեշտությունը,

նպատակ ունենալով ապահովելու որևէ Կողմի՝ մյուս Կողմին փոխանցած գաղտնի տեղեկությունների փոխադարձաբար պաշտպանությունը,

ցանկանալով ստեղծելու Կողմերի միջև փոխանակվող գաղտնի տեղեկությունների փոխադարձաբար պաշտպանության կանոնների ամբողջություն,

հաշվի առնելով գաղտնի տեղեկությունների պաշտպանությանը վերաբերող Կողմերի փոխադարձ շահերը՝ Կողմերի օրենսդրությանը համապատասխան,

համաձայնեցին հետևյալի մասին.

**Հոդված 1**  
**Նպատակ**

Սույն Համաձայնագրի նպատակն է ապահովել Կողմերի միջև պարբերաբար փոխանակվող կամ ձևավորվող գաղտնի տեղեկությունների պաշտպանությունը՝ Համաձայնագրի դրույթներին, Կողմերի օրենսդրությանը և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան:

## Հոդված 2 Սահմանումներ

Սույն Համաձայնագրում օգտագործվող սահմանումները նշանակում են հետևյալը.

«Գաղտնի տեղեկության պաշտպանության պահանջների խախտում» նշանակում է՝ սույն Համաձայնագրին կամ Կողմերի ազգային օրենսդրությանը հակասող գործողություն կամ բացթողում, որի հետևանքը կարող է լինել գաղտնի տեղեկության բացահայտումը, կորուստը, ոչնչացումը, ապօրինի յուրացումը կամ ցանկացած այլ տեսակի գաղտնագերծումը:

«Գաղտնի պայմանագիր» նշանակում է՝ պայմանագրի երկու կամ ավելի կողմերի միջև համաձայնագիր, որը պարունակում է, ներառում է կամ պահանջում է մատչելիություն գաղտնի տեղեկատվությանը:

«Գաղտնի տեղեկատվություն» նշանակում է՝ ցանկացած տեղեկություն կամ նյութ, որը, անկախ իր ձևից կամ բովանդակությունից, պահանջում է պաշտպանություն չթույլատրված գործողություններից, և որը դասակարգվել է Կողմերի օրենսդրությանը համապատասխան:

«Իրավասու մարմին» նշանակում է՝ սույն Համաձայնագրի իրականացման և վերահսկողության համար պատասխանատու ազգային անվտանգության մարմին, որի հետ համաձայնեցվում են սույն Համաձայնագրի իրականացման հետ կապված գործողությունները:

«Պայմանագրային կողմ» նշանակում է՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն իրավունակ է կնքելու գաղտնի պայմանագրեր:

«Հիմնարկության՝ գաղտնի տեղեկատվությանն առնչվելու թույլտվություն» նշանակում է՝ իրավասու մարմնի որոշում, որը սահմանում է, որ, համապատասխան ազգային օրենսդրության համաձայն, իրավաբանական անձն ունի գաղտնի տեղեկություններ տնօրինելու և դրանք պահելու ֆիզիկական և կազմակերպական կարողություններ:

«Իրազեկել՝ ըստ անհրաժեշտության» նշանակում է՝ գաղտնի տեղեկություններին առնչվելու անհրաժեշտություն՝ համապատասխան ծառայողական դիրքի շրջանակում և որոշակի խնդրի լուծման նպատակով:

«Տրամադրող կողմ» նշանակում է՝ այն Կողմը, որը մյուս Կողմի պետությանն է փոխանցում գաղտնի տեղեկությունները:

«Անձնակազմի՝ գաղտնի տեղեկատվությանն առնչվելու թույլտվություն» նշանակում է՝ իրավասու մարմնի որոշում, որը սահմանում է, որ, համապատասխան ազգային օրենսդրության համաձայն, ֆիզիկական անձինք իրավունք ունեն ստանալու գաղտնի տեղեկություններին առնչվելու թույլտվություն:

«Ստացող կողմ» նշանակում է՝ այն Կողմը, որին մյուս Կողմը փոխանցում է գաղտնի տեղեկությունները:

«Երրորդ կողմ» նշանակում է՝ սույն Համաձայնագրի կողմ չհանդիսացող ցանկացած պետություն, կազմակերպություն, իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

«Ենթակապալառու» նշանակում է՝ Կողմերից մեկի օրենսդրության համաձայն՝ պայմանագրի կողմի ներկայացրած ֆիզիկական անձ, իրավաբանական անձ կամ կազմակերպության այլ ձև, որն ունի գաղտնի պայմանագրերը կատարելու իրավունակություն սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

**Հոդված 3**

**Գաղտնիության աստիճաններ**

Սույն Համաձայնագրի նպատակների համար Կողմերը համաձայնում են, որ գաղտնիության հետևյալ աստիճանները և դրոշմագրերը համարժեք են և համապատասխանում են Կողմերի ազգային օրենսդրությամբ նախատեսված գաղտնիության աստիճաններին.

Կիպրոսի Հանրապետության համար	Հայաստանի Հանրապետության համար	Համարժեքն անգլերենում
AKPΩΣ ΑΠΟΡΡΗΤΟ	ՀՍՏՈՒԿ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ	TOP SECRET
ΑΠΟΡΡΗΤΟ	ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ	SECRET
ΕΜΠΙΣΤΕΥΤΙΚΟ	ԳԱՂՏՆԻ	CONFIDENTIAL

Երկու Կողմերից սկիզբ առնող՝ որպես «AKPΩΣ ΑΠΟΡΡΗΤΟ», «ΑΠΟΡΡΗΤΟ» և «ΕΜΠΙΣΤΕΥΤΙΚΟ» դասակարգված տեղեկատվությունը համարժեք է և համապատասխանում է հայկական կողմի «ՀՍՏՈՒԿ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ», «ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ» և «ԳԱՂՏՆԻ» գաղտնիության աստիճաններին, ինչն էլ համարժեք է և համապատասխանում է անգլերենով սահմանված «TOP SECRET», «SECRET» և «CONFIDENTIAL» գաղտնիության միջազգային աստիճաններին:

Կիպրական կողմից սկիզբ առնող՝ գաղտնիության «ΠΕΡΙΟΡΙΣΜΕΝΗΣ ΧΡΗΣΗΣ /RESTRICTED» աստիճանով տեղեկատվությունը համարժեք է և համապատասխանում է հայկական կողմի «ԳԱՂՏՆԻ» / «ΕΜΠΙΣΤΕΥΤΙΚΟ»/ «CONFIDENTIAL» գաղտնիության աստիճանին:

**Հոդված 4**  
**Իրավասու մարմիններ**

1. Կողմերի իրավասու մարմիններն են՝  
**Կիպրոսի Հանրապետության համար՝**  
Կիպրոսի Հանրապետության ազգային անվտանգության մարմինը/ պաշտպանության նախարարությունը:  
**Հայաստանի Հանրապետության համար՝**  
Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը.
2. Կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց տեղեկացնում են իրավասու մարմինների կոնտակտային տվյալների ցանկացած փոփոխության մասին:
3. Ըստ պահանջի՝ իրավասու մարմինները միմյանց տեղեկացնում են գաղտնի տեղեկատվության վերաբերյալ համապատասխան ազգային օրենսդրության մասին և տեղեկություններ են փոխանակում գաղտնի տեղեկատվության պաշտպանությանն առնչվող անվտանգության չափորոշիչների, ընթացակարգերի և գործելակերպերի մասին:

**Հոդված 5**  
**Պաշտպանության միջոցներ և գաղտնի տեղեկատվությանն առնչվելու թույլտվություն**

1. Ազգային օրենսդրության համաձայն՝ Կողմերը ձեռնարկում են պատշաճ բոլոր միջոցները սույն Համաձայնագրի ներքո փոխանակված և ձևավորված գաղտնի տեղեկատվության պաշտպանության համար: Նման գաղտնի տեղեկատվությանը տրվում է պաշտպանության այն նույն աստիճանը, որը նախատեսված է սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածով՝ համարժեք աստիճանի ազգային գաղտնի տեղեկատվության համար:
2. Տրամադրող կողմը Մտացող կողմին գրավոր տեղեկացնում է փոխանցված ցանկացած գաղտնի տեղեկատվության գաղտնիության աստիճանի փոփոխության մասին: